«**ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ**» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ԻՆՉՊԵՍ ՆՊԱՍՏԵԼ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԺԱՄԵՐԻՆ

ՀԵՂԻՆԱԿ՝ ՀՐԱԶԴԱՆԻ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ N 1 ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑԻՉ ՀԱՍՄԻԿ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

ԽՈՒՄԲ/ԱՌԱՐԿԱ՝ 4-ՐԴ / ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՍԵՎԱՆ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3
ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....5
ԳԼՈՒԽ 1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 7
ԳԼՈՒԽ 2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ...11
ԳԼՈՒԽ 3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԸ.....13
ԳԼՈՒԽ 4.1 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԴԵՐԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 15
ԳԼՈՒԽ 4.2 ՈՒՍՈՒՑՄԱՆ ԻՄ ՓՈՐՁԻՑ 21
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 24
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխարհում կատարվող արագընթաց փոփոխությունների ժամանակաշրջանում աստիճանաբար փոփոխության են ենթարկվում և վերանայվում շրջապատող իրականության վերաբերյալ ընկալումները, որոնք ձգտում ենք համապատասխանեցնել կյանքի պահանջներին և լուծումներ տալ առաջադրվող խնդիրներին:Ժամանակակից մանկավարժությունը, բացի առարկայական և մասնագիտական կրթություն ապահովելու խնդրից, ունի նաև մեկ այլ կարևոր խնդիր՝ սովորողներին արդեն դպրոցական նստարանից ընդգրկելու բազմապիսի հասարակական հարաբերությունների մեջ՝ ձևավորելով համագործակցային, խմբում ուրիշների հետ աշխատելու, ինքնուրույն որոշումներ կայացնելու և այդ որոշումների համար պատասխանատվություն կրելու կարողություններ: Այսօր կարևորվում է աշակերտակենտրոն ուսուցումը, որի հիմքում ընկած են դասավանդման նորագույն մեթոդները և մեթոդական հնարները, որոնք նպատակ ունեն սովորողների մեջ ձևավորելու ուսման նկատմամբ դրական վերաբերմունք և ապահովում են սովորողի ակտիվ մասնակցությունն ուսումնական գործընթացին: Եթե նախկինում ուսուցման ընթացքում շեշտը դրվում էր հիմնականում գիտելիքի յուրացման և պարզ վերարտադրության վրա, ապա այսօր առավել կարևորվում է գիտելիքի յուրացման և կիրառման, գործնական հմտությունների ձեռք բերման կարողությունների զարգացումը: Նոր մոտեցումներն առաջնորդվում են մի կարևոր սկզբունքով՝ սովորել՝ կատարելով, սովորել՝ սովորեցնելով: Դա հնարավորություն կտա գիտելիքը դարձնել կիրառական, մեծացնել սովորողների հետաքրքրությունն ուսումնական նյութի նկատմամբ՝ միաժամանակ ապահովել սովորողների ակտիվ մասնակցությունն ուսումնական գործընթացին: Ուսուցիչն իր նպատակին հասնելու համար կարող է կիրառել ցանկացած մեթոդ և հնար՝ դասը արդյունավետ, մատչելի և հետաքրքրաշարժ դարձնելու միջոցով: Ուսուցիչն ազատ է մեթոդի և հնարի ընտրության հարցում: Ուսուցման մեթոդները չեն կարող լավը կամ վատը լինել, դրանք միայն կարող են համապատասխանել կամ չհամապատասխանել այն նպատակներին, որոնց հասնելու համար օգտագործվել են :

Ակտիվ ուսուցման մեթոդները նպաստում են երեխաների ազատ և ինքնուրույն մտածելու, սեփական կարծիք հայտնելու, պատասխանատու որոշումներ կայացնելու, ընտրություն կատարելու հմտությունների զարգացմանը, ճանաչողական գործընթացում ինքնուրույն կողմնորոշմանը: Այդ մեթոդները զույգերով , խմբով մտավոր աշխատանքի եղանակներն են՝ ուղղված համատեղ որոնումների և մտորումների քննարկմանը, ընդհանուր որոշումների կայացմանն ու իրագործմանը: Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը: Ուսուցման ժամանակակից մեթոդների բոլոր տեսակները կատարում են երկու կարևոր գործառույթ.

- նպաստում են գիտելիքների ամրապնդմանը և խորացմանը
- խթանում են նոր գիտելիքների արդյունավետ յուրացմանը:

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Իմ մեթոդը թույլ է տալիս երեխաներին
սովորել բառիս բուն իմաստով
այլ ոչ թե լինել սովորեցվողի դերում»:
Ռոժե Կուզինե

Ժամանակակից աշխարհում արդյունավետ համագործակցային ուսումնական գործընթացի կազմակերպումը, սովորողի ինքնուրույն աշխատանքը, զարգացնող, ակտիվ, ինտերակտիվ և ուսուցման այլ ժամանակակից մեթոդների, ձևերի, խմբային աշխատանքի օգտագործումը գտնվում է մանկավարժական հանրության, ինչպես նաև հասարակության ուշադրության կենտրոնում: Համագործակցային ուսումնառությունը որպես աշակերտների ներգրավվածության բարձրացման միջոց, մեծ ներուժ ունի, ինչով էլ պայմանավորված է ընտրված հետազոտության թեմայի արդիականությունը: Համագործակցային խմբային աշխատանքը հանրակրթական դպրոցում, կրթության, ուսուցման, դաստիարակության և մշակույթի զարգացման հիմնական բաղադրիչն է: Այն հանդիսանում է սովորողի շփման, հաղորդակցման, ճանաչողական կարողությունների ձևավորման միջոց, կյանքում հաջողությունների հասնելու գործիք: Իր նպատակին ծառայելու համար չափազանց կարևորվում է տեղեկատվության հեղեղի մեջ գլխավորը երկրորդականից զատելու, վերլուծելու կարողությունների, հմտությունների ձևավորումը և զարգացումը, ինչին հնարավոր է հասնել համագործակցային խմբերում աշխատելու արդյունքում: Վերջին տարիների ընթացքում հասարակության մեջ ուսուցման միջոցով սոցիալական կարողությունների, հմտությունների և արժեքների նշանակության նկատմամբ վերաբերմունքի մեջ շատ բան է փոխվել: Սովորողների մտածողության, երևակայության, այլ մարդկանց հանդեպ հանդուրժողականության, աշխարհայացքի, սեփական մտքերի, հույզերի, ապրումների, բարոյական արժեքների ձևավորումը և զարգացումը կատարվում է համատեղ աշխատանքի կատարման միջոցով, ինչին հասնելու համար դասարանում ճիշտ կազմակերպված խմբային քննարկումն ակտիվացնում է սովորողին, ստիպում մտածել, ծանր ու թեթև անել, կշռադատել, արժևորել ուսումնական նյութի մեջ քննարկվող մտքերը, ձեռք բերել հասակակիցների խմբում աշխատելու, սեփական տեսանկյունը

հիմնավորելու, դիմացինին լսելու, հանդուրժելու, նրա հետ համագործակցելու սոցիալական հմտություններ, ինչն այդքան արդիական է այսօր և ինչի կարիքն զգացվում է ամենուրեք, ինչը նույնպես պայմանավորում է թեմայի արդիականությունը:

ԳԼՈՒԽ 1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Methodos հունարենից թարգմանաբար նշանակում է <<ուղի, միջոց>>: Ուսուցման մեթոդ ասելով՝ մենք հասկանում ենք անընդհատ կիրառվող աշխատանքի ձև, որը կիրառում է ուսուցիչը՝ ուսումնական գործընթացում, որը հնարավորություն է տալիս զարգացնել աշակերտների իմացական կարողությունները, հետաքրքրությունները, ձեռք բերել նոր կարողություններ և հմտություններ, ինչպես նաև այդ ամենը կիրառել գործնականում: Ուսուցման մեթոդների մշակման ասպարեզում մեծ ավանդ ներդրեցին Վերածննդի դարաշրջանի հումանիստ մանկավարժներ Վիտտորինո դա Ֆելտրեն, Ֆրանսուա Ռաբլեն, Թոմաս Մորը, Միշել Մոնտեն և ուրիշներ: Նրանք առաջարկում էին դպրոցում կիրառել ուսուցման՝ զրույցի, վարժությունների, ցուցադրման մեթոդները: Հայ մանկավարժության պատմության մեջ ուսուցման մեթոդների հիմնավորման գործում մեծ ավանդ են ներդրել նաև հայ դպրոցի ու մանկավարժական մտքի նշանավոր գործիչներ: Այսպես օրինակ, 7-րդ դարի ականավոր գիտնական մանկավարժ Անանիա Շիրակացին ուսուցման գործընթացի կազմակերպման կարևոր պայմաններից էր համարում ուսուցման գործընթացում բազմաբնույթ մեթոդների գործադրումը: Վերածննդի դարաշրջանի ականավոր գիտնական մանկավարժ Հովհաննես Սարկավագ Իմաստասերը նրանցից մեկն էր, ով անընդհատ որոնում ու գտնում էր ուսուցման ավելի արդյունավետ այնպիսի մեթոդներ, որոնք ընդունելի են եղել հետագա բոլոր ժամանակների առաջավոր դպրոցների կողմից և համահունչ են անգամ այսօրվա դպրոցի պահանջներին: Հայկական դպրոցի պատմության մեջ առաջին անգամ նա էր, որ կարդալ ու գրելու անջատ ուսուցման փոխարեն մտցրեց մինչ այդ չընդունված միաժամանակյա ուսուցման եղանակը: Նա հորդորում էր իր աշակերտներին ոչ միայն կարդալ, այլև գրել: Նա իր աշակերտներին կարդալ ու գրել է ուսուցանել, բացատրելու, գրքի վրա աշխատելու, վարժությունների, հարցազրույցի, ստուգման ու գնահատման և ուսուցման այլ մեթոդներով:

Միջնադարի հայ մանկավարժության մեջ նորություններ մտցրեց իր ժամանակի առաջավոր մանկավարժներից Ներսես Շնորհալին: Նա հարցերին մոտենում էր<<դիդակտիկական-ուսուցական տեսակետներով>>: Շնորհալու հիմնադրած դպրոցներում նկատվում են մի շարք առարկաների դասատվության ընթացքում

ուսումնական նյութը ցուցադրելու,նկարելու, գծագրելու միջոցով տեսանելի դարձնելու որոշ փորձեր: Ուսուցումը մատչելի դարձնելու և անցածը լավ մտապահելու նպատակով Ներսես Շնորհալին, որպես նորարարություն մշակում է մանկահասակ երեխաներին այբուբենը սովորեցնելու նորագույն մեթոդ. Դրա էությունն այն է, որ նա այբուբենը ուսուցանում էր քառյակներով:

Հայ մանկավարժության մեջ երախտավոր Վարդան Արևելցու առաջադրած ուսուցման հիմնական մեթոդներից են պատմելու, բացատրելու, դերերով կարդալու, գրաֆիկ աշխատանքների մեթոդները:

Մեծ ուսուցչապետ Հովհան Որոտնեցին բացառիկ նշանակություն է տվել գործնական մեթոդներին, գրավոր և բանավոր վարժություններին:

Հայ մեծ լուսավորիչ մնակավարժ Խ. Աբովյանն իր աշխատություններում մեթոդական ձեռնարկներում քննարկել է ուսուցման տեսության բազմաբնույթ հարցեր, անդրադարձել է նաև ուսուցման մեթոդներին: Անընդհատ որոնումներ կատարելով՝ նա գտնում և պրակտիկայում գործադրում էր ուսուցման արգասավոր մեթոդներ՝ ուսումնական նյութի պատմելն ու բացատրելը, զրույցը, գրքի վրա ինքնուրույն աշխատելը, վարժությունները, էքսկուրսիան, գործնական աշխատանքները և այլ մեթոդներ: Խ. Աբովյանն իր պրակտիկ մանկավարժական գործունեության տարիներին առանձնահատուկ ուշադրություն է դարձրել մայրենի լեզվի ավանդական մեթոդներին: Նա գրաճանաչության գործընթացը անչափ պարզեցրեց՝ ներմուծելով հնչյունային մեթոդը:

Ուսուցման մեթոդների ընդհանուր համակարգում Ա. Բահաթրյանն առանձին կարևորություն է տալիս ուսուցչի կողմից իրականացվող պատմելու, բացատրելու մեթոդին, զրույցին, վարժություններին, խնդիր-առաջադրանքներին, սովորողների ինքնուրույնությունն ու ակտիվությունը զարգացնող բանավեճերին: Արժանի տեղ էր տալիս նաև ցուցադրման, էքսկուրսիայի, գործնական աշխատանքների մեթոդներին:Արդարացի է Ա. Բահաթրյանի պահանջն այն մասին, որ ուսուցիչը պետք է ձգտի դասի ժամանակ կիրառել բազմազան մեթոդներ, որպեսզի նյութը յուրաքանչյուր աշակերտ յուրացնի իր հնարավորություններին համապատասխան:

<<Երեխան կարող է և չլինել նշանավոր գիտնական , բայց դառնալ ինքնուրույն մարդ, ով ընդունակ է վերլուծել իր արարքները, վարքը, ինքնակատարելագործվել, իրացնել իրեն շրջակա աշխարհում , նրան անհրաժեշտ է սովորել>>:

Ինչպե՞ս երեխան կվարժվի կատարել իր աշխատանքը՝ ուսումը: Կլինի՞ արդյոք, ուսումը գրավիչ նրա համար, կստիպի՞ մտածել, քննադատորեն վերաիմաստավորել: Այս ամենը և շատ այլ բան կախված է նրանից, թե դասի ժամանակ ինչ պայմաններ են ստեղծված երեխաների համար:

Ուսուցման մեթոդները մնակավարժի և սովորողի համատեղ աշխատանքն են ուսումնական գործունեություն կազմակերպելու նպատակով: Եթե խոսքը վերաբերում է միայն ուսուցչի գործունեությանը, ապա տեղին է խոսել դասավանդման մեթոդների մասին, իսկ եթե միայն սովորողի գործունեությանն է վերաբերում, ապա՝ ուսանելու մեթոդներին: Մեթոդն այն մեխանիզմն է, որն ապահովում է դասավանդողի և սովորողի մանկավարժորեն որոշակի նպատակադրում ունեցող փոխկապակցված գործունեությունը:

Ուսումնական գործընթացում կիրառվում են բազմաթիվ մեթոդներ: Մենք մասնավորապես անդրադառնալու ենք այն մեթոդներին, որոնցում առկա է սովորողների դերը, որոնք աշակերտներին դարձնում են գիտելիքների և կարողությունների ձեռքբերման գործընթացի մասնակիցը: Այդ մեթոդների թվին է պատկանում համագործակցային ուսուցումը: Այն սովորելու անհատական ոճերի, սովորողի ինքնուրույնության և շարժառիթների իրականացման լավագույն ձևն է: Միասին աշխատելով աշակերտները կարող են համատեղ նպատակների հասնել:

Համագործակցային ուսուցման կիրառումը սկսվում է դեռևս անտիկ դարաշրջանից: «Թալմուդը հասկանալու համար պետք է ընկեր ունենալ»,- գրված է Թալմուդում: Հռոմեացի փիլիսոփա Սենեկան ասում էր, որ սովորեցնողը կրկնակի է սովորում: Իսկ 17-րդ դարում Կոմենսկին հավաստում էր, որ սովորողները շահում են երբ սովորում են ուրիշից, նաև երբ սովորեցնում են ուրիշի: 18-րդ դարում Լանքաստերը և Բելլը Անգլիայում կիրառում են սովորողների փոխուսուցումը:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիան 20-րդ դարի 80-ական թվականներից սկսեց լայն տարածում գտնել: Այս տեխնոլոգիայի ծագման , զարգացման հիմքում ինովացիոն գործընթացներ են, որոնք դիտարկել են մի շարք

նորարար- մանկավարժներ՝ Կ.Դ. Ուշինսկին, Ն.Պ. Պիրոգովը, Լ.Ն. Տոլստոյը, Ս.Տ. Շացկին, , Յա. Կորչակը, Կ. Ռոջերսը, Հ. Հինդիլյանը, Ս. Մանդինյանը և այլոք:

Համագործակցային ուսուցման տեխնոլոգիան, ըստ կիրառման եղանակի, ընդհանուր մանկավարժական տեխնոլոգիա է, որի հիմքում մարդասիրական մանկավարժության դրույթներն են: Այդ պատճառով էլ այս տեխնոլոգիան ունի կիրառման լայն շրջանակ՝

- կրթական բոլոր աստիճաններում ՝ սկսած նախադպրոցական կրթությունից մինչև ուսուցիչների որակավորման բարձրացման դասընթացները,
- գրեթե բոլոր ուսումնական առարկաների դասաժամերին ՝ մայրենի և օտար լեզուներ, տեխնոլոգիա, ինֆորմատիկա, կերպարվեստ, մաթեմատիկա և այլն,
- այն նաև դաստիարակության տեխնոլոգիա է , հաջողությամբ կիրառվում է արտադասարանական և արտադպրոցական աշխատանքներում, դպրոց- ընտանիք փոխգործակցության համատեքստում:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համագործակցային ուսուցման հիմքում ընկած են հիմնականում երեք տեսություններ՝ սոցիալական փոխկախվածության, ճանաչողության զարգացման, վարքագծային ուսումնառության:

Սոցիալական փոխկախվածության տեսության նրկայացուցիչները (Կուրտ Կաֆկա, Կուրտ Լեվին) խումբը դիտում են որպես դինամիկ ամբողջություն, որտեղ շեշտադրվում է ընդհանուր նպատակից բխող փոխկախվածությունը. խմբի անդամներից մեկի վիճակի փոփոխությունը հանգեցնում է մյուսների վիճակների փոփոխության: Իսկ ներխմբային լարումը հանգեցնում է խմբի ընդհանուր նպատակի իրականացմանը:

Ճանաչողական զարգացման տեսությունն իր հիմքում ներառում է Պիաժեի, Վիգոտսկու, Բրունների հայացքները: Վիգոտսկին ասում էր՝ գիտելիքին հատուկ է սոցիալական որոշակի բնութագիր, և ծնվում է ծագած խնդիրների ըմբռնման և լուծման ընթացքում գործադրած համատեղ ջանքերով: Նյութը վերապատմելու կամ վերաշարադրելու ընթացքում սովորողներն արդեն ձևավորված ճանաչողական կառուցվածքներում որոշակի փոփոխություններ են կատարում: Հետևաբար, ըստ Վիգոտսկու, մտավոր աշխատանքի լավագույն ձևը սովորածը ընկերոջը բացատրելն է: Իսկ Ջերոմ Բրունները մշակեց հետազոտական ուսուցման գաղափարը, որը շրջադարձային եղավ: Նա ներկայացնում է ճանաչողական ուսուցման մի մոդել, որտեղ տեղեկությունն անցնում է ընկալում-դասակարգում-յուրացում շղթայով և վերաճում գիտելիքի՝ հիմնվելով ոչ թե ինչ սովորելու, այլ ինչպես սովորելու սկզբունքի վրա:

Վարքագծային ուսումնառության տեսության կողմնակիցները շեշտադրում են խմբային աշխատանքի արդյունքի խրախուսումը, որը որոշակի դրդապատճառ կամ շարժառիթ (մոտիվացիա) է դառնում ուսուցման գործընթացի համար: Սքիները մշակեց ծրագրավորված ուսուցման մի ձև, ըստ որի՝ ուսումնական նյութը բաժանվում է տրամաբանական հաջորդականություն ներկայացնող փոքրիկ մասերի՝ քայլերի: Պատասխանելով համեմատաբար պարզ և հեշտ մի քանի հարցերի՝ աշակերտները խրախուսանք են ստանում, ինչը դառնում է ուսուցման գործընթացը շարունակելու և նյութն ամբողջությամբ յուրացնելու խթան:

Խմբում սոցիալական փոխկապվածության գաղափարը ամբողջացրին ամերիկացի Ջոնսոն եղբայրները: Նրանք զարգացրին «Սոցիալական փոխկախվածության» տեսությունը՝ նշելով սոցիալական փոխկախվածության ազդեցությունը սովորողների նվաճումների, փոխհարաբերությունների, հոգեբանական առողջացման և սոցիալական զարգացման վրա՝ միջանկյալ փոփոխությունների միջոցով:Ներկայումս համագործակցային ուսուցումը լայն տարածում ունի սկանդինավյան երկրներում և ԱՄՆ-ում:

Համագործակցային ուսուցման կարևորագույն ձեռքբերումներն են

- անձի զարգացումը և անհատականության ձևավորումը.
- հոգեբանական և ֆիզիկական առաղջության ապահովումը.
- սթրեսի հաղթահարումը.
- շրջապատողների հետ առողջ փոխհարաբերությունների կառուցումը:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԸ

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու համագործակցային ուսուցման էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման և արժևորման համար, ինչպես նաև ապահովում է ռեֆլեքսիան և բարելավում է խմբային աշխատանքը:

Համագործակցային ուսուցման հիմնական տարրերը



Աղբյուր՝ D. Johnson, R. Johnson, E. Holubec(1994, էջ 26)

Դրական փոխկախվածություն

Համագործակցային ուսուցման ապահովման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական՝ աջակցող փոխկախվածության ապահովումը: Փոխկախվածություն կարող է առաջանալ երեք տարբեր ձևերով

1. Մրցակցային. երբ խմբի անդամները ուսուցման նպատակներին հասնելու համար մրցում են միմյանց հետ:
2. Անհատական. երբ խմբի անդամները առկախվում են խմբակիցներից և յուրաքանչյուր աշակերտ կատարում է իր անհատական առաջադրանքը:

3. Համագործակցային. երբ խմբի անդամները համագործակցում են միմյանց հետ ընդհանուր նպատակին հասնելու համար:

Դրական փոխկախվածությունը այն զգացումն է , որ խմբի յուրաքանչյուր անդամ կապված է խմբի մյուս անդամների հետ այնպես, որ չի կարող հաջողության հասնել միայնակ: Կարելի է ասել, որ դրական փոխկախվածությունը համագործակցային ուսուցման <<սիրտն>> է:

Դեմ առ դեմ փոխազդեցություն

Երբ խմբերում ստեղծվել է դրական փոխկախվածություն, անհրաժեշտէ առավելագույնի հասցնել աշակերտների կողմից միմյանց սատարելու գործոնը:
Այս դեպքում խմբի անդամները աշխատում են դեմ-դիմաց և տեսնում են միմյանց :

Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն

Համագործակցային ուսուցման նախապայմաններից մեկն այն է , որ սովորողը հաշվետու է իր և յուրաքանչյուր անդամի համար: Անհատական հաշվետվությունն ու պատասխանատվությունն առկա են, երբ առանձին գնահատվում է յուրաքանչյուր աշակերտի առաջադիմությունը:Անհատական հաշվետվությունն ու պատասխանատվությունը համագործակցային ուսուցման կայացման անհրաժեշտ պայմաններից են:

Սոցիալական համագործակցային խմբեր

Խմբային առաջադրանքներ կատարելիս աշակերտները անցնում են այնպիսի իրավիճակներով, որոնք պահանջում են բարդ փոխհարաբերություններ և սոցիալական հմտություններ: Աշակերտների մոտ համագործակցային հմտությունների ձևավորման նպատակով ուսուցչի տրամադրած ժամանակն ու գործադրած ջանքերը կախված են աշակերտների նախնական պատրաստվածության աստիճանից: Սոցիալական հմտությունները ըստ համագործակցային ուսուցման լինում են չորս մակարդակների՝ ձևավորում, գործունեություն, ձևակերպում, խմորում:

ԳԼՈՒԽ 4.1 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԴԵՐԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Այն ինչ այսօր երեխաները կարող են անել միասին, վաղը նրանք դա կանեն միայնակ:

Լև Վիգոտսկի

Ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում: Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝ օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով պրակտիկ վարժություններ, խնդիրներ: Իհարկե, ակտիվ՝ համագործակցային մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռք բերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում և այդ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն ակտիվ մեթոդներով: Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ, ինչպիսիք են՝ պատմելը, բացատրելը, դասախոսությունը: Ակտիվ մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել աշակերտի մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը: Բայց կարևոր է նաև նշել, որ ակտիվ մեթոդների մեծամասնությունը բազմաֆունկցիոնալ նշանակություն ունեն ուսուցման գործընթացում:

Ակտիվ ուսուցման մեթոդները ենթադրում են օգտագործել այնպիսի մեթոդների համակարգ, որոնց ժամանակ ուսուցիչը չի մատուցում պատրաստի գիտելիքներ, այլ սովորողների կողմից գիտելիքի ինքնուրույն ձեռք բերում՝ ակտիվ ճանաչողական գործունեության ընթացքում: Լ. Ս. Վիգոտսկին ձևակերպել է օրենք, որտեղ ասվում է, որ ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ: Համագործակցային մեթոդների հիմքում ընկած է երկխոսությունը, ինչպես ուսուցչի և

աշակերտմերի միջև, այնպես էլ իրենց՝ աշակերտների միջև: Երկխոսության ընթացքում զարգանում է հաղորդակցման հմտությունները, խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը զարգանում է աշակերտների խոսքը:

Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է աշակերտներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խմդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել ձեռք բերված գիտելիքները: Ակտիվ մեթոդների նպատակն այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռք բերման գործընթացում ընդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները (խոսքը, հիշողությունը, երևակայությունը և այլն):

Համագործակցային մեթոդների անվանման հիմքը համագործակցել բառն է: Սկզբնական շրջանում այսպես էր անվանվում՝ ուսումնական պարապմունքների մի որոշակի տարբերակ, որն աշակերտներին միմյանց հետ հաղորդակցվելու, ուսումնասիրվող հարցը համատեղ քննարկելու, բանավեճային իրադրություններում ակտիվ մասնակցելու և տվյալ հարցի վերաբերյալ սեփական պատկերացումները ձևավորելու բարենպաստ հնարավորություններ է տալիս: Հետագայում ավելի տարածվեց ինտերակտիվ մեթոդներ բառակապակցությունը, որը ներառում էր վերոհիշյալ հնարավորություններով դրսևորող ուսումնական պարապմունքների կազմակերպման մի շարք համանման տարբերակներ: Իհարկե, ցանկացած սոցիալական գործընթաց մարդկանց փոխազդեցություն է, մասնավորապես՝ ուսուցումը նպատակաուղղված և հատուկ կերպով կազմակերպված փոխազդեցություն է: Սակայն ուսուցման գործընթացի բնույթը պայմանավորվում է այդ փոխազդեցության կառուցվածքով, ձևերով ու բովանդակությամբ: Դաս-դասարանային համակարգի ուսուցման գործընթացի կառուցվածքային հիմքում դրված է փոխազդեցության ուսուցիչ-աշակերտական խումբ ձևը: Սա է պատճառը, որ ուսումնական պարապմունքները կազմակերպվում են ընդհանուր ճակատով, այսինքն՝ աշխատանքի յուրաքանչյուր պահին բոլոր աշակերտները զբաղված են միևնույն խնդրով, աշխատում են միևնույն ձևով, տվյալ խնդրի կատարման համար բոլորին հատկացվում է միևնույն ժամաքանակը: Նման տեսակի ուսումնական պարապմունքները անվանում են խմբային:

Խմբային պարապմունքների բավական լուրջ պրոբլեմներից մեկն այն է, որ ուսումնական խմբի անդամների մեծ մասը պասիվ լսողի դերում է հայտնվում: Սրա հաղթահարման ուղիներից մեկն աշակերտների միջև արդյունավետ փոխազդեցության կազմակերպումն է, ինչն էլ հենց հանդիսանում է ինտերակտիվ մեթոդի հիմնական գաղափարը: Սակայն խմբային ուսուցման պայմաններում աշկերտների միջև փոխազդեցություն կազմակերպելու հնարավորությունները սահմանափակ են: Այստեղ հիմնականում օգտագործվում են ենթախմբային կամ համախմբային քննարկումների տարբեր հնարներ ու մեթեդներ, որոնք բավական արդյունավետ են կարծիքների ձևավորման, փոխանակման ընդհանուր մոտեցումների մշակման համար: Եթե երեխայի գործունեության առաջնային և ցանկալի ձևը համարվում է խաղը, ապա ուսուցման կազմակերպման համար պետք է օգտագործեն գործունեության այս ձևը՝ համատեղելով խաղը և ուսումնական գործընթացը, ավելի ճիշտ, օգտագործել խաղային գործունեությունը կրթական նպատակներին հասնելու համար: Այս դեպքում խաղի մոտիվացիոն ներուժը կուղղվի ուսումնական ծրագրի ավելի արդյունավետ իրագործմանը: Բարձր դրական մոտիվացիան կարող է լրացնող գործոն հանդիսանալ սովորողների ոչ բավարար բարձր ունակությունների ժամանակ, բայց հակառակ ուղղությամբ այդ սկզբունքը չի աշխատում՝ ոչ մի կարողություն չի կարող փոխհատուցել մոտիվացիայի բացակայությունը և ապահովել ուսուցմնա էական առաջընթաց: Բնական խաղային միջավայրում, որտեղ չկա պարտադրանք և կա հնարավորություն յուրաքանչյուր երեխայի համար ստեղծել հաղորդակցական ազատ միջավայր, անկախություն, ազատ իրականացնելու իրենց կարողությունները և կրթական կարիքները, հանդիսանում է ուսումնական նպատակներին հասնելու օպտիմալ տարբերակ: Եվ կրթական գործընթացում ուսուցման համագործակցային մեթոդների ներառումը թույլ է տալիս ստեղծել այդպիսի միջավայր՝ ինչպես դասարանում, այնպես էլ արտադպրոցական միջոցառուների ժամանակ: Տարբեր մեթոդներով ուսուցման և կրթական-արտադրական արդյունավետ գործունեության ակտիվացման հնարավորություները բազմազան են, դա կախված է համապատասխան մեթոդի բնույթից ու բովանդակությունից, կիրառման ձևից և ուսուցչի հմտությունից:

Խմբային ուսուցման մեթոդի կիրառումը շատ արդյունավետ է տվյալ խնդիրը իրականացնելիս: Այս մեթոդների կիրառմամբ ուսուցման գործընթացի

արդյունավետությունը և արդյունքները պայմանավորված են նրանով, որ մեթոդների ստեղծումը հիմնվում է լուրջ հոգեբանական և մեթոդաբանական գիտելիքի վրա:

Մեթոդների կիրառումը նպաստում է՝

- Սովորողների ճանաչողական ակտիվության բարձրացմանը,
- կրթական գործընթացին աշակերտների ակտիվ ներգրավմանը,
- ինքնագործունեության խթանմանը,
- ճանաչողական գործընթացների խթանմանը՝ խոսք, հիշողություն, մտածողություն,
- ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացմանը,
- ստեղծագործական մտածելակերպի զարգացմանը,
- աշակերտի անհատական հաղորդակցական –զգայական ոլորտի զարգացմանը,
- ուսումնական դրական խթանի զարգացմանը:

Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ,որոնք ունեն ինչպես նմանություններ, այնպես էլ տարբերություններ:Համագործակցային ուսուցման մեթոդներն են՝ Աշակերտների թիմային առաջադիմություն, Խճանկար,Շրջագայություն պատկերասրահում, Երեք բանալի և մեկ կողպեք, Հինգրոպեանոց ազատ շարադրանք:

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ: Համագործակցային ուսուցման այս մեթոդը մշակել է Ռոբերտ Սլավինը: Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը: Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը: Այս մեթոդը խթան է հանդիսանում ցածր առաջադիմություն ունեցող երեխաների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունավետության բարձրացման գործում: Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից օգնեն ընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները: Այս մեթոդը կիրառելիս գնահատվում է , թե՛ առանձին աշակերտը և թե՛ խումբը:

Խճանկար (Ջիգսո,Jigsaw):Խճանկարը համագործակցային ուսուցման մեթոդ է: Այն մշակվել և փորձարկվել է Տեխասի համալսարանում՝ Էլիոթ Արոնսոնի և նրա գործընկերների կողմից, այնուհետև լրամշակվել է Սլավինի և վերջինիս գործընկերների կողմից: Խճանկարը դասարանում կարող է կիրառվել տարբեր ձևերով: Օրինակ՝ աշակերտներին կարելի է բաժանել չորս կամ հինգ անդամ ունեցող տարասեռ խմբերի:

Յուրաքանչյուր խմբի տալ դասի մեկ հատված և որոշակի ժամանակ: Ձևավորվում են փորձագիտական խմբերը:Փորձագիտական խմբերում տրված հատվածը յուրացնելուց հետ աշակերտները վերադառնում են հենակետային խմբերը: Յուրաքանչյուր փորձագետ սովորեցնում է իր թեման խմբի անդամներին: Արդյունքում նյութը յուրացնում են բոլոր աշակերտները:

Շրջագայություն պատկերասրահում: Սա <<Խճանկար>> մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գազափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ: Կրտսեր դպրոցականների հետ աշխատելիս խմբերին կարելի է տալ նույն առաջադրանքը կամ խնդիրը: Աշխատանքը վերջացնելուց հետո համեմատելով մյուս խմբերի աշխատանքների հետ աշակերտները հետադարձ կապ են ապահովում:

Խմբային հետազոտության մեթոդ: Խմբային հետազոտության մեթոդի կիրառման ժամանակ աշակերտները աշխատում են խմբերով մեկ թեմայի շուրջ: Համագործակցային ուսուցման մյուս մեթոդների նման խմբային հետազոտությունը հիմնվում է աշակերտների փոխօգնության վրա: Խմբային հետազոտության մեթոդի հեղինակը պրոֆեսոր Շարոնն է, սակայն այս մեթոդի ակունքները հանդիպում են Ջոն Դյուիի տեսության մեջ: Այս մեթոդը կիրառելիս աշակերտները սովորում են համակարգված և վերլուծականորեն հետազոտել կոնկրետ խնդիրը: Աշակերտները խորությամբ են յուրացնում տրված նյութի բովանդակությունը և սովորում են համագործակցել հետազոտելու ընթացքում:Այսպիսով աշակերտները յուրացնում են բովանդակությունը, զարգանում է համագործակցային աշխատանքի հմտությունները:

Երեք բանալի և մեկ կողպեք: Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան: Աշակերտներին առաջարկում ենք դասից դուրս երեք նախադասություն (երեք բանալի), որը կարևոր է այդ նյութը յուրացնելու համար,

բնագրից ընտրել մեկ նախադասություն (կողպեք), որը կամփոփի, կընդհանրացնի ասելիքը, միտքը, գաղափարը:

Հինգ րոպեանոց ազատ շարադրանք: Հինգ րոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից: Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանքը:

Համագործակցային ուսուցման ընթացքում ուսուցիչը ստանձնում է մեծ թվով պարտականություններ՝

- դասերի, վարժությունների, առաջադրանքների պլանավորում.
- սովորողների խմբերի ձևավորում.
- սովորողների տեղաբաշխում.
- առաջադրանքի ներկայացում, և բացատրում.
- խմբային աշխատանքի հսկողություն և անհրաժեշտության դեպքում միջամտություն.
- օգնություն սոցիալական հմտությունների զարգացման հարցում.

գնահատում:

ԳԼՈՒԽ 4.2 ՈՒՍՈՒՑՄԱՆ ԻՄ ՓՈՐՁԻՑ

Պատմություն ուսումնական առարկայի նպատակներից և խնդիրներից է նպաստել սովորողի կարևոր մարդկային հատկանիշների՝ համագործակցելու, լսելու կարողության, դիմացինի կարծիքը հարգելու, թիմային պատասխանատվության ձևավորմանը: Դա է պատճառը, որ ավանդական մեթոդներին զուգահեռ դասապրոցեսում կիրառում եմ նաև համագործակցային մեթոդներ: Պատմության դասաժամերի առանձնահատկությունները թույլ են տալիս կազմակերպել խմբային աշխատանք համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներով: Խթանման փուլում հաճախ կիրառում եմ «Հինգ րոպեանոց ազատ շարադրանք» մեթոդը: Աշակերտները հինգ րոպեի ընթացքում գրում են դասի գլխավոր գաղափարը: Այս մեթոդի միջոցով ես շեշտադրում եմ պատմության արդիականացման մոտեցումը: Իմաստի ընկալման փուլում հաճախ կիրառում եմ «Խճանկար», «Խմբային հետազոտության» մեթոդները: Համագործակցային մեթոդների հաճախակի կիրառման արդյունքում եկա այն եզրակացության, որ մեթոդների կիրառումը ուսուցչից պահանջում է ժամանակի ճիշտ կառավարման հմտություն և ճկունություն: Ընդհանրապես մեթոդների կիրառման արդյունավետությունը հիմնականում կախված է ուսուցչի դասը ճիշտ պլանավորելու, սովորողների խմբերը ճիշտ ձևավորելու, առաջադրանքը ճիշտ ներկայացնելու հմտությունից: Խմբային աշխատանք իրականացնելիս հստակ հետևում եմ մի շարք կանոնների. մինչ դասի սկսելը դասասենյակը կահավորում եմ խմբային աշխատանքին համապատասխան: Աշխատանքի հրահանգը հնչեցնելիս հստակ նշում եմ , թե ինչ եմ ակնկալում խմբերի աշխատանքից, թե ինչ վերջնարդյունք պետք է ունենանք: Առաջադրանքը կազմելիս, նկատի եմ ունենում, որ խմբի բոլոր անդամները ունենան անելիքի իրենց բաժինը: Աշխատանքի ողջ ընթացքում իրականացնում եմ մշտադիտարկում, որպեսզի համոզվեմ արդյոք բոլորն են աշխատում և համագործակցում են միմյանց հետ: Խմբային աշխատանքի իրականացման ողջ ընթացքում հսկում եմ և անհրաժեշտության դեպքում նոր միջամտում: Աշխատանքը ներկայացնելիս կարևոր է, որ մասնակցեն խմբի բոլոր անդամները և պահպանեն սահմանված ժամանակը: Շատ կարևոր է, որ աշակերտների մոտ ձևավորվի այն պարզ գիտակցումը, որ դասարանում իրենց կողմից իրականացվող ցանկացած գործողություն

ու աշխատանք արվում է հենց իրենց հմտությունների զարգացման ու աճի համար, այլ ոչ թե ուսուցչին հաշվետու լինելու համար:

Ստորև ներկայացնում եմ իմ իրականացրած դասերից մեկի պլանը՝

ԴԱՍԻ ՊԼԱՆ

Հայոց պատմություն

XI դասարան

ԹԵՄԱ՝ Հայկական հարցի միջազգայնացումը

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՆՅՈՒԹԵՐ՝ Դասագիրք, տետր, քարտեզ, սահիկաշար, նկարներ, բաշխիչ նյութ

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ՝ Ձևավորել գիտելիքներ XIX դարի երկրորդ կեսի աշխարհաքաղաքական իրավիճակի և դրա համատեքստում հայկական հարցի բովանդակության մասին, հայկական հարցի միջազգայնացման, Արևմտյան Հայաստանի ազատագրման նպատակով իրականացված ձեռնարկների, ակնառու գործիչների վերաբերյալ:

Զարգացնել վերլուծական, քննադատական, հետազոտական, համագործակցային կարողությունները:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔ՝ Ներկայացնի Հայկական հարցի միջազգայնացման գործընթացը, համեմատի լուծման ուղղությամբ իրականացված ձեռնարկները և կնքված պայմանագրերը, դրանց արդյունքները:

Փորձի առաջարկել Հայկական հարցի լուծման տարբերակներ:

Արդիականացնի, դուրս հանի տվյալ ժամանակաշրջանի և ներկա Հայաստանի միջև եղած բազմատեսակ կապերը:

Արժևորի պատմությունից դասեր քաղելու կարողությունը:

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊ՝ Աշխարհագրություն---Ռուսական կայսրության, Օսմանյան կայսրության պատմաշխարհագրական

տարածքներին համընկնող երկրներն ու այնտեղ ապրող բնակչությունն այսօր:

Հայոց լեզու--- Բանավոր ճիշտ և գրագետ խոսք:

Կերպարվեստ--- Վերլուծել Վարդգես Սուրենյանցի «Խրիմյան Հայրիկ կաթողիկոսի դիմանկարը » կտավը:

ԽԱՉՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ օրինաչափություն, անհատներ և հարաբերություններ

ԿԻՐԱՌՎՈՂ ՄԵԹՈԴՆԵՐ՝ «Շրջված դասարան» , «Մուտքի քարտ» , «Հինգ րոպեանոց ազատ շարադրանք» , «Խմբային հետազոտության մեթոդ» «Տ-աձև աղյուսակ»

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ՝

Խթանման փուլ Էկրանին ցուցադրել Էջմիածնի Մայր տաճարի այգում գտնվող շերեփ ցայտաղբյուրը և անել հարցադրում՝ ի՞նչ կապ կա այս ցայտաղբյուրի և մեր դասի մեջ (Մուտքի քարտ): Այնուհետև « 5 րոպեանոց ազատ շարադրանք» մեթոդի միջոցով թեման արդիականացնել:

Իմաստի ընկալման փուլ - Խմբերին հանձնարարել «Խմբային հետազոտության» մեթոդի միջոցով ուսումնասիրել և այնուհետև ներկայացնել նախապես տրված բաշխիչ նյութը:

- Տ-աձև աղյուսակի միջոցով համեմատել Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերը:

- Վերլուծել Վ. Սուրենյանցի կտավը:

Կշռադատման փուլ - Քննարկում – Հայկական հարցի միջազգայնացման հետևանքները

-Պատմության դասերը

Տնային հանձնարարություն

Գնահատում

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության ընթացքում հանգեցի այն եզրակացության,որ պատմության դասաժամերի առանձնահատկությունները թույլ են տալիսկազմակերպել խմբային աշխատանք համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներով: Համագործակցային ուսուցումն ավելի արդյունավետ է դարձնում ուսուցման գործընթացը, նպաստելով սովորողների սոցիալական այնպիսի հմտությունների զարգացմանը ինչպիսիք են՝ համագործակցելու և հաղորդակցվելու հմտությունը, լսել կարողանալու ունակությունը, դիմացինի կարծիքի հետ հաշվի նստելու կարողությունը, թիմային պատասխանատվության ձևավորումը: Նման ուսուցման ժամանակ նույնիսկ ամենաթույլ սովորողը թեկուզ փոքր, բայց որոշակի ներդրում է ունենում տրված առաջադրանքը կատարելու համար:

Համոզվեցի նաև , որ համագործակցային ուսուցման արդյունավետությունը մեծապես կախված է ուսուցչի դասը ճիշտ պլանավորելու, առաջադրանքները ճիշտ կազմելու և ժամանակը ճիշտ կառավարելու հմտություններից: Առաջադրանքը պետք է լինի ստացած գիտելիքը գործնականում կիրառելու, ունեցած գիտելիքի վրա հիմնվելով նոր բան ստեղծելու հնարավորություն: Առաջադրանքները պետք է խրախուսեն ներգրավվածությունը, փոխգործակցությունն ու փոխլրացումը և աշխատանքի արդար բաշխումը:

Ամփոփելով կարող եմ ասել, որ ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման նորագույն փոխներգործուն մեթոդներին տիրապետելն է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Արնաուդյան Ա., Օհանովա Ի.,Հովհաննիսյան Գ., Զոհրաբյան Ա., Գրիգորյան Ք., Դավթյան Մ., << Կառուցողական կրթության հիմունքները և մեթոդները>> (ձեռնարկ ուսուցիչների համար), Երևան, հրատ. <<Տիգրան Մեծ>>2005, էջ335
2. Խաչատրյան Ս.Գ., Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը, Գյումրի, 2006, էջ 96
3. Հովհաննիսյան Ա., Հարությունյան Կ., Խրիմյան Մ., Խաչատրյան Ս., Բայաթյան Ն., Ալեքսանյան Լ., Պուրուկուրու Վ., Համագործակցային ուսուցում, Երևան, <<Անտարես>> հրատ., 2006,էջ 117
4. Վարդումյան Ս., Ջաղինյան., Հարությունյան Լ., Գարի Վարելլա, Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, Երևան, <<Նայյան տապան>> հրատ., 2005, էջ 402
5. <<Ուսուցման ժամանակակից մեթոդներ, հնարներ, վարժություններ>>, Վանաձոր, Կրթության ազգային ինստիտուտ, Լոռու մասնաճյուղ, 2008, էջ98